

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԸ

(Ջորջ Օրուել ընթերցելիս)

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Բանալի բառեր – Քաղաքականություն, լեզու, Ջորջ Օրուել, «երկմտածո-դություն», հայաստանյան լեզվական վիճակ, ՀՀ պետական լեզվաքաղաքականության հիմնախնդիրները, Պարույր Սևակ, քաղաքական վերնախավի լեզվական վարքագիծը, լեզվավիճակի Բարեփոխման անհետաձգելի լուծումներ, Լեզվի կոմիտե, Հայերենի բարձրագույն խորհուրդ:

ՆԵՐՄՕՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հակաուտոպիայի ժանրի առավել հանրահայտ վեպերից մեկը բրիտանացի նշանավոր գրող Ջորջ Օրուելի «1984» գիրքն է՝ Արժե, թերևս, հիշեցնել, որ եթե, ի տարբերություն ավանդական «ուտոպիական» ստեղծագործության, որտեղ հեղինակը նկարագրում է մարդկանց համակեցության կազմակերպման ցանկալի, իդեալական, բայց գոյություն չունեցող («ուտոպիա»՝ տեղ, որը չկա. մեկ այլ մեկնաբանությամբ՝ երանելի տեղ) տիպարի իր պատկերացումը՝ առանց դրան հասնելու ուղիների հիմնավորման (գրական այս ժանրը նման պահանջ չի դնում), ապա «հակաուտոպիան» այլ խնդիր ունի, այն է՝ զգուշացնել ընթերցողին, ահագանգել ամբողջ մարդկությանը անցանկալի, կործանարար և ոչ այնքան հեռավոր ապագայի գալուստից՝ ներկայի որևէ վտանգավոր երևույթի հնարավոր զարգացման առավելագույնս ցցուն պատկերմամբ:

Ահավասիկ, Ջ. Օրուելի 1949 թ. լույս տեսած գրքում հանգամանորեն նկարագրված է, թե ինչպես է ամբողջատիրական հասարակության պայմաններում իրականացվում ոչ միայն մարդկանց մտքի ու արարքների ամենակոլ և մանրախույզ վերահսկողություն, այլև լեզվական ամբողջ հա-

մակարգի և լեզվի հանրային գործածության արմատական վերափոխում՝ հանուն քաղաքացիների լեզվաշխարհի խորքային աղավաղման, կենսական-աշխարհայացքային ապակողմնորոշման, ուստի և նրանց հյու-հնազանդ վարքագծի ապահովման:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Պատերազմը խաղաղություն է: Ազատությունը ստրկություն է: Տգիտությունը ուժ է»². Իշխող կուսակցության հույժ պերճախոս այս եռմիասնական կարգախոսը համատարած է, աչքի է զարնում ամեն քայլափոխի: Մի խումբ մասնագետների ջանքերով՝ ձևավորման ընթացքի մեջ է նոր լեզուն (Newspeak), որը տրամագծորեն փոխելու է հին լեզվի (Oldspeak) բառերի իմաստը, նաև հնարավորին չափ առհասարակ կրճատելու է բառերի քանակությունը («Ամեն մի կրճատում շահեկան է, քանզի որքան փոքրանում է բառերի ընտրության տիրույթը, այնքան փոքրանում է մտածելու գայթակղությունը»¹):

Բայց նպատակն այստեղ ավելի հեռահար է. իշխող վերնախավի նենգության գլուխգործոցը քաղաքացիների մեջ, այսպես կոչված՝ «երկմտածողության» (doublethink) ձևավորումն է:

«Երկմտածողության» էությունն է՝ համատեղել միմյանց բացառող իմաստով բառերը, արտահայտությունները և դատողությունները, իսկ մարդկանց համոզել, թե երկուսն էլ ճիշտ են. «Գիտենալ և չգիտենալ, հավատալ սեփական ճշմարտախոսությանը՝ միտումնավոր կեղծիք շարադրելով, ունենալ միաժամանակ երկու հակադիր կարծիք՝ իմանալով, որ դրանք հակադիր են, բայց հավատալով, թե երկուսն էլ ճիշտ են, տրամաբանությամբ սպանել տրամաբանությունը, մերժել բարոյականությունը՝ հռչակելով բարոյականություն, հիմնավորել ժողովրդավարության անհնարիությունը և կուսակցությունը հռչակել որպես ժողովրդավարության պատվար, մոռանալ այն, ինչը հարկավոր է մոռանալ և մտքում վերականգնել մոռացածը, երբ այն հարկավոր է լինում օգտագործել և դարձյալ անմի-

¹ Տե՛ս **G. Orwell**, 1984, London: Secker and Warburg, 1949. Կա հայերեն և ռուսերեն թարգմանությունը. **Ջ. Օրուել**, 1984, Եր.: Անտարես, 2012; **Дж. Оруэлл**. 1984. М.: АСТ, 2016.

² G. Orwell, 1984, p. 6.

ջապէս մոռանալ, ամենակարևորը՝ գիտակցաբար հաղթահարել գիտակցությունը և այդ ընթացքում չգիտակցել, որ զբաղված ես ինքնահիպնոսով»²:

«Երկմտածողությունը» չշփոթենք հայերեն «երկմտություն» բառի հետ³. հայոց լեզվամտածողությամբ՝ վերջինս անցողիկ վիճակի բնութագիր է, վարանելու, տարակուսելու ժամանակավոր, ուստի և հաղթահարելի մի վիճակ, իսկ առաջինը մտածելակերպի հիմնարար բնութագրիչ է, մասնավորապես՝ միմյանց իմաստով բացառող հասկացությունների նույնական գործադրում (տրամաբանության հիմնական օրենքներից մեկի՝ «երրորդի բացառման օրենքի» ակնհայտ, բայց «երկմտածողության» ենթարկվածների համար աննկատելի խախտում):

Արդ, լեզուն միտումնավոր կերպով աղավաղելը իշխանություն գործադրելու նրբահնար ձևերից մեկն է, «խելացնոր կառավարման» եղանակ, և դա պարզիպարզ խոստովանում է Ջ. Օրուելի կերպարներից մեկը՝ բարձրաստիճան մի կուսակցական. «Նրան, ով իշխում է և մտադիր է շարունակել իշխել, անհրաժեշտ է ունենալ իրողության զգացումն աղավաղելու հմտություն»⁴:

Աղավաղել իրողությունը և աղավաղված մատուցել բարեփոխումների ծարավ ընտրազանգվածին. քաղաքական ուժի նմանօրինակ ամբոխահաճ վարքագիծը մեզ մի թե ոչինչ չի հիշեցնում: Բուն իսկ հայաստանյան քաղաքական վերնախավի դավանած փիլիսոփայության իրական էության աստիճանական ծավալումն է մեզ այսօր ավելի ու ավելի հասկանալ տալիս, որ մեր «1984» թվականը սկսվել է 2018 թ. գարնանը և ավելի ու ավելի է նմանվում Ջորջ Օրուելի պատկերածին. հակաուտոպիան ինքն է դառնում իրական մղձավանջ:

Բայց փորձենք փոքր-ինչ խորքից գալ:

Ըստ իս, հայությանն առնչվող թե՛ առհասարակ քաղաքականության, թե՛ մասնավորապես լեզվական քաղաքականության մեջ դրսևորվող դրական կամ բացասական երևույթների քննարկումը արժե սկսել Պա-

¹ Ibidem, p. 388.

² Ibidem, p. 44.

³ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր.: Հայաստան, 1976, էջ 352:

⁴ Ibidem, p. 271.

րույր Սևակի «Թրի դեմ՝ գրիչ» ծրագրային հոդվածի հիմնադրույթներից: Դրա ենթավերնագիրն է՝ «Մաշտոցի սխրագործությունը»: Իսկ հատկապես ի՞նչն է դա: Չէ՞ որ մինչև մեր ականավոր գրողն էլ է քանիցս ասվել (և հարատև կասվի) հայոց այբուբենի համազգային բացառիկ կարևորության մասին, և ամեն տեսակի դրվատանքի է արժանացել մեծն Մաշտոցը: Հատկապես վերջինիս գործելակերպի համապարփակ էութենական բնութագրումն է Պարույր Սևակի գնահատականի առանձնահատկությունը. «Այսպես կարող էր գործել ո՛չ սոսկ տառաստեղծը, ո՛չ էլ մեծ լեզվաբանն անգամ. այսպես կարող էր գործել միայն մեծ քաղաքագետը»¹:

Իսկ Մաշտոց-քաղաքագետի մեծագույն սխրանքը, հիրավի, համեմատելի է միայն հայոց կորուսյալ պետության նորովի հիմնադրման հետ¹.

Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ-Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Մա՛րբեց միայն՝ անզեն ու անգորք.
Մեզանից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղյա՛լ պետություն,
Թագավորություն մի հզորագոր՝
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժա՛ն,
Մեր անկիսելի՛
Երբե՛ք չխլվող հոգիների մեջ:

«Քաղաքագետ», «քաղաքագիտություն», «քաղաքականություն» բառերն այսօր այնքան սովորական և հասկանալի են թվում, որ Պարույր Սևակի ասածն էլ չենք կարողանում ըստ արժանվույն ըմբռնել և իմաստավորել: Մինչդեռ սևակյան մեկնաբանության խորքային բովանդակությունն այսօր, թերևս, առավել հրատապ է և մեր խառնափնթոր այս վիճա-

¹ Պ. Սևակ, Թրի դեմ՝ գրիչ (Մաշտոցի սխրագործությունը) // Սևակ Պ., Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 5, Եր.: Հայաստան, 1974, էջ 183:

կում՝ անփոխարինելի մի կողմնորոշիչ: Ահավասիկ. «Չափազանցություն՝ ն կլինի արդյոք, եթե ասվի, որ քաղաքականության մեջ հայերս առանձին ընդունակություն չենք ցուցաբերել: Ավելին. մեր և՛ հին, և՛ նորագույն պատմությունը լեցուն է հակառակն ապացուցող անջնջելի փաստերով և անշտկելի իրողություններով: Այնքան շատ գործածելով «աջ»-ը, որից բարդվել ու ածանցվել են հարյուրավոր այլ բառեր ու դարձվածքներ՝ քաղաքականության մեջ մեր նախնիները գործել են մեծ մասամբ ձախ ձեռքով: Ուստի և՛ ձախորդություններ, ձախավերություն, ձախողակություն... Եվ մեր քաղաքագիտական մտքի պատմությունը հիրավի արգահատելի կլինեն, եթե արձանագրած չլինեն մեկ-երկու հաղթանակ: Բայց արդար լինենք և ավելացնենք, որ այդ մեկ-երկու հաղթանակի համար քիչ է թվում նույնիսկ այնպիսի ածականը, ինչպիսին է «մեծ»-ը: Այդ հաղթանակները բախտորոշիչ էին, վճռական»²:

Նման մի վճռական հաղթանակ, թերևս, կարող էինք անվանել անկախ Հայաստանի լեզվական օրենսդրության ձևավորումը, հայերենի՝ պետական և պաշտոնական լեզվի անվերապահ գերիշխանության հաստատումը, հանրային և անհատական կյանքի վերահայերենացումը, գրեթե հոգեվարքի շեմին հայտնված (հատկապես մայրաքաղաքում) հայկական դպրոցների վերագարթոնքը, ռուսական գաղութային դպրոցներում կրթված և հայերեն խոսքից և մտածելակերպից օտարացած հայաստանյան հայերի զանգվածային դարձը: Մինչդեռ, ցավոք, անցած երեսուն տարում մենք հարկադրված ենք արձանագրելու ավելի շատ ձախորդումներ³:

Սույն հրապարակման հասցեատերը, անտարակույս, քաջատեղյակ է լեզվի կատարած հանրային, անձնային, ազգային, պետական, մշակութային դերերին, այնպես որ միմյանց համոզելու որևէ խնդիր չկա. այդուհանդերձ, տեղին է, ըստ իս, մեր մեծերից գոնե մեկ մեջբերում-հիշեցում. «Լեզուն կրիսի ժողովուրդի մը հոգեբանության բուն խորքերեն և արդեն ինքնին անոր հոգիին հարազատ մեկ կտորն է: Մինչև մարդուս միտքը չծնի

¹ Պ. Սևակ, Եվ այր մի Մաշտոց անուն // Սևակ Պ., Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 4, Եր.: Հայաստան, 1973, էջ 260:

² Պ. Սևակ, Թրի դեմ՝ գրիչ, էջ 166:

³ Տե՛ս Ն. Բեժանյան, Վ. Միրզոյան, Լեզվական անկախության երեսուն տարին, Եր.: Մեկնարկ, 2023:

իր լեզուն, բանականությունը թև առնել չի կրնար ու չի կրնար սավառնիլ հոգեկան ու քաղաքակրթական բարձունքները: Լեզվի մը բառերուն կերտվածքը, հնչական հատկությունները, նախադասություններու շենքը, շարքը, կապակցումը, ոճը, ինչպես և բառերուն իմաստը, նրբությունները, փոխաբերումները, այլառումները բոլորը պտուղ են այդ ժողովուրդի մտածելու ու դատելու եղանակին, զգացումին, ճաշակին, բնավորությանը»¹:

Արդ, ասվածի լույսով անդրադառնանք հայաստանյան արդի լեզվավիճակին և, ուրեմն, մեր՝ մտահոգ մտավորականներիս անելիքին:

Գրեթե բարձիթողի լեզվավիճակ, լեզվական քաղաքականության համար պատասխանատու գործադիր մարմնի՝ Լեզվի կոմիտեի (նախկինում՝ ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչություն) նսեմացած կարգավիճակ, լեզվական կանոնարկման մարմնի՝ Հայերենի բարձրագույն խորհրդի (նախկին Տերմինաբանական կոմիտեին փոխարինած) լուծարում, լեզվական քաղաքականության պետական ծրագրի բացակայություն, նախկին գաղութային՝ ռուսական կրթությամբ դպրոցների բացման սպառնալից հեռանկար, հրապարակային խոսքի անմխիթար վիճակ (ներհայաստանյան որոշ կազմակերպություններ սկսել են հաղորդակցվել օտար լեզուներով), պաշտոնյաների մեծամասնության լիակատար արհամարհանք հայերենի անադարտության պահպանման պահանջի հանդեպ... Հայերենի ուղղագրության միասնականացման օրենսդրական պահանջը չի կատարվել, բուհերում մասնագիտական հայերենի ուսուցման նպատակը աղավաղվել է, գիտության և տեխնիկայի շատ բնագավառներում հայերենը ոչ միայն դարձյալ զիջել է դիրքերը, այլև փաստորեն զրկված է զարգացման հանրային ազդակներից...

Հանրալեզվաբանության տեսակետից Հայաստանի Հանրապետության պետական լեզվի գործառույթների լիաձավալ և անխոչընդոտ իրականացման համար կարևոր են բազում հանգամանքներ՝ հստակորեն նպատակադրված պետական լեզվաքաղաքականությունը և դրա անշեղ իրականացումը, հայերենի հանրային բարձր վարկի ապահովումը, լեզ-

¹ Լ. Շանթ, Ազգությունը հիմք մարդկային ընկերության // Շանթ Լ., Երկերի ժողովածու ինը հատորով, հատ. ութերորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 21:

վակիրների պատասխանատվության չափը, հայալեզու գրականության հրատարակման պետական աջակցությունը և այլն:

Լեզվաքաղաքական ամենալուրջ խնդիրը... հայաստանյան արդի իրողության մեջ այս երկբաղադրիչ բառի ներքին հակասությունն է. պարզվում է, որ ներկայիս քաղաքականությունը, բառիս նեղ իմաստով քաղաքականությունը, այսինքն՝ քաղաքական իշխանության հրապարակային իրականացումը, ամենալուրջ վտանգն է հայոց լեզվի՝ միակ պետական կարգավիճակ ունեցող լեզվի համար:

Այստեղ եկեք զուգահեռ տանենք Ջորջ Օրուելի մեկ այլ՝ «Քաղաքականությունը և անգլերենը» գրքի հետ: Արձանագրելով անգլերենի գործածության վատթարացման բազում դեպքեր, վերլուծելով մի շարք օրինակներ, Ջ. Օրուելը մերժում է դա միայն առանձին հեղինակների մեղքով բացատրությունը և շփի-շիտակ նշում է հիմնական պատճառները. «Հիմա պարզ է, որ լեզվի անկումը պետք է որ ունենա քաղաքական և տնտեսական պատճառներ. դա չի կարող լինել պարզապես այս կամ այն առանձին հեղինակի վատ ազդեցությամբ: Սակայն հետևանքը կարող է պատճառ դառնալ՝ ուժեղացնելով սկզբնական պատճառը և վերարտադրելով միևնույն հետևանքն առավել սաստիկ ձևով, և այդպես՝ մինչև հավերժություն: Մարդը տրվում է խմիչքին, քանի որ իրեն ձախողակ է զգում, այնուհետև առավել ևս ձախողվում է, քանի որ խմում է: Դա գրեթե նույնն է, ինչ կատարվում է անգլերենի հետ: Վերջինս դառնում է անճոռնի և անստույգ, քանի որ մեր մտքերն են հիմարավուն, իսկ մեր խոսքի թափփփվածությունը դյուրին տեղ է տալիս նման մտքերին: Թեպետ, այս ընթացքը շրջելի է: Ժամանակակից անգլերենը, հատկապես գրավոր անգլերենը, հազեցած է վատ սովորություններով, որոնք տարածվում են նմանակմամբ, և որոնցից հնարավոր է խուսափել, եթե ցանկանանք ձեռնարկել անհրաժեշտ միջոցները: Ազատվելով այդ սովորություններից՝ կարող ենք մտածել ավելի հստակորեն, իսկ հստակ մտածելակերպն առաջին քայլն է դեպի քաղաքական վերածնունդ: Ուրեմն՝ վատ անգլերենի դեմ պայքարը դատարկ քմահաճույք չէ, և բնավ էլ ոչ միայն պրոֆեսիոնալ գրողների հոգար»¹:

¹ G. Orwell, Politics and the English Language // Orwell G., Why I Write. London: Penguin Books, 2013, p. 102–103.

Փոքր-ինչ երկարավուն այս մեջբերումը ոչ միայն լեզվավիճակի վատթարացման պատճառն է նշում, այլև, ինչպես տեսնում ենք, վիճակի շտկման հնարավորության լավատեսական հիմք է թողնում: Բայց, իրոք, առաջին քայլը պիտի լինի իրողության ազնիվ ու անաչառ արձանագրումը: Փորձենք դա անել:

Ինչպես բոլորիս հայտնի է, աշխարհաքաղաքական իշխանական կենտրոնների կամքով և ծրագրով թիրախ-երկրներում հետևողաբար իրականացվող «գունավոր» հեղափոխություններից հերթականը փայլուն հաջողությամբ պսակվեց Հայաստանում 2018 թ. գարնանը: Ինչը չհաջողվեց 1999 թ. հոկտեմբերի 27-ին և 2008 թ. մարտի մեկին, այս անգամ հաջողություն էր ապահովել Հայաստանում վխտող օտարերկրյա գործակալների, «մարդու իրավունքների» կեղծ պաշտպանների, սորոսական դրամաշնորհներով ուռճացած կազմակերպությունների, տարատեսակ ադանդների, անհասկանալի սեռապատկանելիության անձանց համագործակցության շնորհիվ: Օրվա իշխանությունից զանգվածային դժգոհությունը, իր հերթին, պարարտ հող դարձավ նոր, առերևույթ ժողովրդավարական ուժերի դյուրին հաղթանակի համար:

Հետահայաց հասկանալի է դառնում, որ մինչ Հայաստանի «հպարտ քաղաքացիներին» կերակրում էին «դուխով» հերոսանալու, «նախկիններին» «մերժելու», փողոցում «ժողովրդական վարչապետ» ընտրելու «աննախադեպ» հեռանկարով, բոլորիս՝ մասամբ վերահաս պատուհասը կանխագգացող, իսկ հիմնականում՝ միամիտ ու հուսավառ, հարկավոր էր հիշել Լևոն Շանթի մարգարեական մի ասույթը. «Բառերը հաճախ արյունոտ հեղափոխություններ կբերեն, և հեղափոխություններ կան, որ պարզ բառափոխություններ են»¹: Ընդ որում, ասույթի երկու մասն էլ չարաղետ հաստատում գտան, ամենակործանարար իրողությունը դարձան Հայաստանի պետության ինքնուրույն գոյության և առհասարակ հայ ժողովրդի հետագա գոյատևման համար:

Դժվար չէ պատկերացնել, թե այսօր նսեմացած, արհամարհված, «հեղափոխական» խանդավառությունից հիասթափված, ապաշնորհ կառավարության պատճառով զոհեր տված և զրկանքներ կրած քաղաքացիներ

¹ Լ. Շանթ, Ազգությունը հիմք մարդկային ընկերության, էջ 28:

ինչ դառնությամբ է հիշում իրեն երբեմնի տրված «հպարտ» տիտղոսը: Այսօր շատերն են գիտակցում, որ «դուխով»-ը նախատեսված էր հայոց «ոգի»-ին ընկճելու համար: «Ապագա կա ապագա» անհասկանալի շարահյուսությամբ կարգախոսին հավատացածները հարցնում են, թե «որտեղ է այդ ապագան», «ում համար է այդ ապագան»...

Հետանկախության շրջանում մշտապես ասվել է «նախորդ» իշխանությանը քաղաքական պատասխանատվության ենթարկելու մասին, իսկ «նախորդ» որակում, որպես կանոն, գործածում է «հաջորդ»-ը, որը ինչ-որ չափով ինքն էլ է իրեն պատասխանատու համարում նախորդի սխալների համար: Մինչդեռ «նախկիններ» բառը մոգական մի դեր խաղաց. նախորդը եթե հաջորդից անմիջապես առաջ է եղել, ապա «նախկիններ»-ը հեռու, հեռավոր, անվերադարձ անցյալ են¹. «բա ուզում եք նախկինները հետ գան» սարսափազդու զգուշացումը մինչև օրս հիպնոսի պես է ազդում ամբոխի վերածված, ամբոխային մտածողության գերի դարձած, արդեն իսկ փաստորեն «երկմտածողությունը» լավ յուրացրած որոշ քաղաքացիների վրա: Մասամբ, թերևս, դրանով է բացատրվում ներկայիս աղետալի վիճակում Հայաստանի քաղաքացիների մեծ մասի առնվազն տարօրինակ բարոյական և քաղաքական վարքագիծը: Եվ, կարծեք, իսլացած և կուրացած՝ վերջիններս չեն էլ նկատում, որ «ներկաները» ոչ միայն չեն շտկել նախկինների սխալները, չեն վերացրել արատները, այլ դրանք բազմապատկել են: «Արցախը Հայաստան է ու՝ վերջ» անվերապահ սկզբունք հռչակած, «Անջատում՝ հանուն փրկության» կարգախոսն առաջ բերած քաղաքական ուժը, ուստի և հայ ժողովրդի մի հատվածի համար քաղաքական պատասխանատվություն ստանձնածը (նաև այդկերպ քվեներ շահած) ներկայում գործածում է միայն «Լեռնային Ղարաբաղ» անվանումը և թմբկահարում Ադրբեյջանի տարածքային ամբողջականության ճանաչումը: Նույնիսկ ՀՀ անկախության հռչակագիրն է հռչակվում որպես «կոնֆրոնտացիոն» փաստաթուղթ, որը իբր «մեզ անընդհատ կոնֆլիկտների մեջ էր պահելու մեր հարևանների հետ»: Ահա այսպես օրուելյան «Պատերազմը խաղաղություն է» այլափոխման հանգույն իշխող վերնախավը «խա-

¹ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1051, 1052:

ղաղության օրակարգ» խոսույթն է մեջտեղ բերել՝ չհասկանալով (իսկ գուցե շատ լավ էլ հասկանալով), որ թույլի դիրքերից կնքված, մուրացյալ խաղաղությունը մի նոր, ավելի կործանարար և նսեմացուցիչ պատերազմի դուռ է բացում: Իրոք, մեզ պատերազմ են մատուցում՝ նենգափոխելով բառի իմաստը...

«Հստակ լեզվի ամենամեծ թշնամին կեղծավորությունն է:– Ասում է Ջ. Օրուելը և մասնավորեցնում դիտարկումը:– Եթե խոսողի իրական և հռչակած նպատակների միջև կա խզում, ապա նա, կարծեք բնագդաբար, հակվում է երկար բառերի ու մաշված դարձվածքների գործածությանը»¹:

Ասվածի հաստատումն է, թեկուզ, հայաստանյան բարձրագույն պաշտոնատար անձի հրապարակային խոսքը: Ըստ «Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի»՝ պաշտոնական խոսքում ՀՀ քաղաքացիները պարտավոր են ապահովել գրական հայերենի անաղարտությունը: Վարչապետի ելույթներում այդ պահանջը մշտապես խախտվում է, և այն տպավորությունն է ստեղծվում, որ դա միտումնավոր է արվում: Գրական հայերենի նորմերի խստիվ (և այլոց համար ընդօրինակելի) պահպանման փոխարեն՝ ժողովրդախոսակցական խոսելակերպ և բառապաշար, գոեհկաբանություն, ցինիկություն, բառերի և ձայնարկությունների անհարկի կրկնություն, մակաբույծ արտահայտություններ («ըստ էության», «ուրեմն», «և հետևաբար»), շարունակական միջարկություններ, ամեն երրորդ նախադասությունը, որպես կանոն, կիսատ է մնում, համագործածական բառերի սխալների տարափ՝ «ամսեկան» (փոխանակ «ամսական»), «իրանց» («իրենց»), «իմ մոտ հարց է ծագում» («իմ մեջ»), «ռեակցիա տալ» («արձագանքել»), «կարան ասեն» («կարող են ասել»), «էդքան» («այդքան»), «իրեք» (երեք), «ութանասուն» («ութսուն»), «որտև» («որովհետև»), «էդտեղ» («այդտեղ»), «պըտի» («պիտի»), «տենց» («այդպես»), «ըլնի» («լինի»), «կոնֆրոնտացիա» («առճակատում»), «մոնիտորինգ» («մշտադիտարկում»), «մանիպուլյացիա» («ձեռնածություն»), «կատաստրոֆիկ» («աղետալի»), «պրոբլեմ» («խնդիր»), «լեգիտիմ» («օրինական») և այլն: «Է» օժանդակ բայը (որը, ի դեպ, որպես տառ և հնչյուն

¹ G. Orwell, Politics and the English Language, p. 116.

ինքնին այնքան հոգեհարազատ է հայ մարդուն¹⁾ հազվադեպ է բախտ ունենում իր տեղում հայտնվելու («պետք ա», «որոշում ա», «պրոբլեմ ա», «դառնում ա», «վերաբերվում ա», «բան ա», «եղել ա», «պայմանավորվածություն ա», «մասին ա», «որոշվելու ա», «մտնում ա», «ճանաչում ա», «ուզում ա», «ընկալում ա», «ո՞վ ա», «քարոզչություն ա», «գտնում ա», «վճարվել ա», «տխուր ա»):

Եթե լեզվական նման մակարդակով հնարավոր է պետություն դեկավարել, ուրեմն, միանգամայն տրամաբանական է դառնում բուհերում հայոց լեզվի և գրականության դասավանդման աստիճանական կրճատումը և վերացումը: Տողերիս հեղինակի և շատ այլ հայաստանցիների կարծիքով՝ իշխող քաղաքական ուժի անսքող հայերենամերժությունը և Հայաստանամերժությունն էին պատճառը (եթե ոչ դրսի ուղղակի հրահանգը) անկախության վերելքի ժամանակ, 1990 թ. հոկտեմբերին Գերագույն խորհրդի հիմնադրած «Հայաստանի Հանրապետություն» թերթի կասեցման սույն թվի հունիսի մեկին (թեպետ մինչև տարեվերջ բյուջեն նախատեսված էր, մատակարարման և առաքման համապատասխան պայմանագրերը՝ կնքված էին):

Իհարկե, այս իրողությանը դեմ հանդիման ամեն ոք ազատ է սեփական դիրքորոշումն ընդունելու. զբաղվենք լեզվի հարցերով՝ զերծ մնալով քաղաքականությունից: Այդպե՞ս: Ջորջ Օրուելը համաձայն չէ. «Մեր օրերում գոյություն չունի «քաղաքականությունից հեռու մնալու» նման մի բան: Բոլոր խնդիրները քաղաքական խնդիրներ են, իսկ քաղաքականությունն ինքնին կեղծիքի, խուսափանքի, հիմարության, ատելության և մտազարության մի զանգված է: Եթե ընդհանուր մթնոլորտը վատն է, լեզուն պիտի տառապի»²⁾:

Բայց տառապում է նաև լեզվի հարցերով զբաղվող մտավորականը. «Եթե միտքն այլասերում է լեզուն, լեզուն նույնպես կարող է աղավաղել միտքը: Վատ լեզվագործածությունը կարող է տարածվել ավանդույթի և նմանակման միջոցով, նույնիսկ նրանց շրջանում, ովքեր պարտավոր են և

¹ Տե՛ս Դ. Վաքուժան, Է տառը մեր այբբենարանին մեջ // Երկերի լիակատար ժողովածու երեք հատո-րով, հատ. 3, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 17–18:

² G. Orwell, Politics and the English Language, p. 116.

իսկապես լավ գիտեն լեզուն»¹: Վստահ եմ, որ բրիտանացի հեղինակի ասածը վերաբերում է նաև հայերենի գիտականներին:

Արդ, քաղաքականության և լեզվի, խոսքի և մտքի փոխադարձ այլա-սերումը մեզանում իրողությունն է, թե՛ ոչ: Եթե այո, ուրեմն ի՞նչ պիտի անենք: Ապավինել լեզվական համակարգի ինքնակարգավորմանը, թե՛ գործուն քայլեր ձեռնարկել: Մեկ էլ դիմենք մեր խորհրդատուին. «Անհա-ջող բառերն ու արտահայտությունները հաճախ վերացել են ոչ թե զար-գացման ինչ-որ ընթացքում, այլ փոքրաթիվ մարդկանց նպատակադրված գործողությունների շնորհիվ»²:

Այո՛, մենք քիչ ենք, բայց մենք ազգային և քաղաքացիական արժա-նապատվություն ունեցող լեզվակիրներ ենք՝ գրողներ, լեզվաբաններ, լրագրողներ, պատմաբաններ, փիլիսոփաներ, գրականագետներ, հրատա-րակիչներ, խմբագիրներ, սրբագրիչներ, ուսուցիչներ, դասախոսներ, թարգ-մանիչներ, դերասաններ, հաղորդավարներ, գրքասերներ, ուսանողներ, ա-շակերտներ... Մենք քիչ ենք... Բնավ ո՛չ: Եվ մի՞թե մեր մեծ մասի գործու-նեության հիմնական միջոցն ու ասպարեզը լեզուն և լեզվական քաղաքա-կանությունը չէ, մի՞թե մեր գլխավոր դերը հայերենի հանրային հզորացու-մը և հայերենի իմացության մեր անձնական կատարելագործումը չէ:

Դե, եկեք ականջալուր լինենք մեծն Պարույր Սևակին. «Գրողի ա-ռաջնահերթ խնդիրը լեզուն տիրապետելը չէ՛: Իսկ մենք, բացի թաքուն կամ բացահայտ խորշանքից, այլ մի վերաբերմունք ունե՞նք լեզվաբանա-կան գրականության հանդեպ, զգո՞ւմ ենք մեր լրագրերի, մեր թարգմանա-կան գրականության և մեր իսկ գրքերի լեզուն աղճատող օտարաբանու-թյունները, նկատո՞ւմ ենք աղաղակող սխալները, տեսնո՞ւմ ենք այն չո-րուցամաքությունն ու աղքատությունը, որ քիչ է մնում օրինակելիության ուժ ստանան»¹:

Այս պատգամի մեջ թվարկվածը մեր հիմնական անելիքն է: Բայց մենք պիտի պահանջենք, որ հայաստանյան ամեն մի ատյան և պաշտոն-յա նույնպես իր անելիքն իմանա և պատշաճ կերպով անի:

¹ Ibidem.

² Ibidem, p. 117.

Ամենից առաջ, Հայաստանի կառավարությունից պահանջենք վերականգնել պետության լեզվական քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու մարմնի՝ ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության (այժմ՝ Լեզվի կոմիտե՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմում) նախկին՝ պետական գործադիր մարմնի ինքնուրույն կարգավիճակը, ապահովել գործունեության լիարժեք պայմանները: Լեզվավիճակի կարգավորումը համահանրային (սոցիետալ) հիմնախնդիր է, և միայն հայաստանյան որոշ պաշտոնյաների իրավաբանական տգիտությամբ կամ հայերենամերժությամբ է հնարավոր բացատրել Լեզվի տեսչության խցկումը գործադիր մեկ այլ մարմնի մեջ, համապատասխանաբար՝ գործելու հնարավորությունների (կարգավիճակ, հաստիքներ, տարածք և այլն) կոծկումը:

Կառավարությունը պարտավոր է անհապաղ և վերջնականորեն վերականգնել Հայերենի բարձրագույն խորհուրդը և գործունեության ընդգրկումն ասպարեզ ապահովել: Հիշեցնեմ, որ ՀՀ կառավարությունը Լեզվի պետական տեսչության ստեղծումով (1993 թ. հոկտեմբեր) աննպատակահարմար գտավ նախկինում տարբեր կարգավիճակով գործած Տերմինաբանական պետական կոմիտեի գործունեությունը և 1994 թ. սկզբին լուծարեց: Փաստացի դառնալով նաև կոմիտեի իրավահաջորդը, տեսչությունն իր կազմում (գուտ տողերիս հեղինակի անձնական նախաձեռնությամբ) վերստեղծեց (1995 թ. հոկտեմբերի 13-ին) նույն այդ գործառույթներն իրականացնող մարմին՝ Հայերենի բարձրագույն խորհուրդ՝ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի բարեհաճ համաձայնությամբ և գլխավորությամբ:

Խորհրդի անդամների պատկառազոր կազմը լավագույն ապացույցն է, թե որքան արդյունավետորեն կարող են համագործակցել լեզվաբանները և մյուս գիտակարգերի շահագրգիռ ներկայացուցիչները, հայերենի ազգամշակութային բացառիկ դերը գիտակցող տարբեր մտավորականները: Խորհուրդը իր մասնագիտացված ճյուղային եզրաբանական հանձնաժողովների համատեղ աշխատանքով հույժ արգասաբեր եղավ հայերենի կանոնարկման ասպարեզում: Հայերենացվեցին և գործածութ-

¹ **Պ. Սևակ**, Տերյանը պահանջում է... // Սևակ Պ., Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 5, Եր.: Հայաստան, 1974, էջ 63:

յան լայն շրջանառության մեջ դրվեցին բազում նոր եզրեր՝ հասարակական-քաղաքական, տնտեսագիտական, աշխարհագրական, բժշկագիտական, կենսաբանական, կենցաղային և այլն:

Այսօր որպես սովորական ընկալվող մի շարք եզրեր ծնվել կամ հաստատում են ստացել ՀԲԽ-ի նիստերի բուռն քննարկումների ժամանակ. ամբոխահաճություն (պոպուլիզմ), այցագիր (վիզա), սեղմագիր (ավտոռեֆերատ), հավաստագրում (սերտիֆիկացում), բազմարկիչ (մուլտիպլիկատոր), բաժնեմաս (քվոտա), սակարան (բորսա), մասնավորեցում (պրիվատիզացիա), գանձարանային (ֆիսկալ), լրահատկացում (սուբսիդիա), փորձագետ (էքսպերտ), ընդդիմախոս (օպոնենտ), համատիրություն (կոնդոմինիում), տպիչ (պրինտեր), համաքաշ (բրուտո քաշ), գտաքաշ (նետո քաշ), պատճենահան (քսերոքս), գրավատուն (լոմբարդ), մենաշնորհ (մոնոպոլիա), մարգասաքք (տրենաժոր), շահաբաժին (դիվիդենտ), խորհրդատու (կոնսուլտանտ) և այլն:

Այնուհետև բացառիկ կարևորության այդ մարմինն առհասարակ վերացավ: Լեզվի պետական տեսչության նոր կարգավիճակով այն չէր կարող լինել տեսչության կազմում, բայց փաստացի էլ չկար, որ պարզվի դրա կազմակերպարավական վիճակը: Մի քանի տարի հայերենի կանոնարկման օրենսդրական պահանջը չի կատարվել, և դրա համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Թեպետ 2017 թ. մարտի 2-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության վարչապետին կից հայերենի բարձրագույն խորհուրդ» (1-ին հավելվածով հաստատվեց խորհրդի անհատական կազմը, իսկ 2-րդով՝ աշխատակարգը), սակայն մարմինը չհասցրեց էլ կարգին գործել. 2018 թ. գարնանը նոր կառավարությունը լուծարեց խորհուրդը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Քննարկված երկու հիմնախնդրի՝ ՀՀ կառավարության առընթեր լեզվի պետական տեսչության (ներկայում՝ Լեզվի կոմիտեի) բարձր կարգավիճակի վերականգնումը և համահայկական լեզվական կանոնարկման մարմնի՝ Հայերենի բարձրագույն խորհրդի վերստեղծումը, երկու այդ հաստատությունների համար լիարժեք գործունեության բոլոր պայման-

ների ապահովումը, առանցքային նշանակություն ունի պետական լեզվաքաղաքականության և հայաստանյան առկա լեզվավիճակի բարեփոխման համար:

Կան, անտարակույս, մի շարք այլ խնդիրներ (պաշտոնատարների և սպասարկման ոլորտում աշխատողների լեզվի մացության ստուգման կարգի հաստատում, լեզվական փորձաքննության կենտրոնի ստեղծում, թարգմանական գրականության լեզվական մակարդակի գնահատում, հայերեն հրատարակությունների համար իրական արտոնությունների ապահովում, լեզվական խորհրդատվության ծառայության մատուցում, հայերենի ուղղագրության միասնականացման ծրագրի ստեղծում և այլն), որոնք նախկին կարգավիճակը ստացած Լեզվի պետական տեսչությունը և Հայերենի բարձրագույն խորհուրդը ի գորու կլինեն լուծելու, բնականաբար, համագործակցելով պատկան մարմինների և հայապահպան բոլոր կազմակերպությունների ու անձանց հետ:

Валерий Мирзоян, Политика и армянский язык (читая Джорджа Оруэлла) – В статье, параллельно с оруэллским анализом причин ухудшения качества английского языка рассматриваются некоторые неотложные проблемы публичного функционирования армянского языка. Выделены причины нынешней почти полной запущенности государственной политики в области языка и возникновения серьезных препятствий перед полноценным использованием армянского языка – единственного государственного и официального языка Республики Армения. Особое внимание уделено негативному воздействию на языковую среду публичной речи представителей высших эшелонов власти – неоднократное нарушение ими требований «Закона о языке РА». Опаснее всего то, что подобно господствующей партии в романе Оруэлла «1984», которая целенаправленно насаждала в сознание рядовых граждан так называемое «двоемыслие», нынешняя власть в Армении с мая 2018-ого года нарастающими темпами добивается искажения языкового мира граждан, выдвигая взаимоисключающие цели и лозунги. В качестве первостепенных задач улучшения языковой политики выделяются два требования – восста-

новления высокого статуса прежней Государственной инспекции по языку (ныне Комитет по языку в составе Министерства образования, науки, культуры и спорта) и воссоздание Высшего совета армянского языка.

Valery Mirzoyan, Politics and the Armenian Language (reading George Orwell) – In the article, in parallel with the Orwellian analysis of the reasons for the deterioration of the quality of the English language, some urgent problems of the public functioning of the Armenian language are considered. The reasons for the current almost complete neglect of the state policy in the field of language and the emergence of serious obstacles to the full use of the Armenian language, the only state and official language of the Republic of Armenia, are highlighted. Particular attention is paid to the negative impact on the language environment of the public speech of representatives of the highest echelons of power – their repeated violation of the requirements of the "Law on the Language of the Republic of Armenia". The most dangerous thing is that, like the ruling party in Orwell's novel "1984", which purposefully planted the so-called "doublethink" in the minds of ordinary citizens, the current government in Armenia since May 2018 has been increasingly trying to distort the linguistic world of citizens, putting forward mutually exclusive goals and slogans. Two requirements stand out as the primary tasks for improving the language policy - the restoration of the high status of the former State Inspectorate for Language (now the Committee on Language within the Ministry of Education, Science, Culture and Sports) and the re-establishment of the Supreme Council of the Armenian Language.

Ուղարկվել է խմբագրություն 31.08.2023թ.

Գրախոսվել է 05.09.2023թ.

Մտորագրվել է տպագրության 10.09.2023թ.